Կարգապահական գործ թիվ ԿԳ-14071

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի փետրվարի 24-ի թիվ 42-րդ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/33-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԼԵՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՑԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Կարեն Մեժլումյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Երվանդ Վարոսյանի, Մարտուն Փանոսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Լենա Կարապետյանցին (արտոնագիր թիվ 910) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

2014 թվականի հունիսի 03-ին ՀՀ փաստաբանների պալատ է մուտքագրվել Քաղաքացի Ռուզան Ադանալյանի (այսուհետ՝ նաև Դիմող) դիմումը: Դիմողը հայտնել է, որ 20.08.2013թ. դիմել է «Շահբազյան և գործընկերներ» փաստաբանական ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող գումարի բռնագանձման գործով Դիմողի՝ որպես պատասխանողի շահերը ներկայացնելու նպատակով: 2013 թվականի սեպտեմբերին Դիմողի և Ընկերության միջև կնքվել է պայմանագիր, որի շրջանակներում Դիմողը վճարել է 200.000 ՀՀ դրամ գումար: Ընկերությունից Դիմողի շահերը ներկայացրել է փաստաբան Լենա Կարապետյանցը: Դիմողի վկայակոչած փաստերից բխում է, որ վերջինիս հիմնական նպատակը նշված քաղաքացիական գործի շրջանակներում իր գործով հայցվոր Լուսինե Գինոսյանի մոտ գրավ դրված երեսունմեկ կտոր ոսկյա զարդերը հետ ստանալն է, սակայն Ընկերությունը չի խոստացել, որ Դիմողը զարդերը հետ կվերադարձնի:

Դիմողի շահերի պաշտպանության նպատակով փաստաբան Լենա Կարապետյանցը ներկայացրել է հակընդդեմ հայցադիմում:

Դիմողը նշում է, որ իրեն դուր չի եկել փաստաբան Լենա Կարապետյանցի

կողմից կազմված հակընդդեմ հայցադիմումը: Դիմողի կողմից ներկայացվել է հայցադիմումի իր կողմից գրված տարբերակը, որն ըստ Դիմողի՝ պետք է ներկայացվեր դատարան:

Դիմողը ներկայացրել է գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունների պատճեններ, որոնք դատարան են մուտք եղել փաստաբան Լենա Կարապետյանցի անունից:

Դիմողը գտնում է, որ փաստաբան Լենա Կարապետյանցի կողմից նշված միջնորդությունները ներկայացվել են գործի քննությունը ձգձգելու և գումար աշխատելու նպատակով, քանի որ վերջինս համագործակցում է հակառակորդ կողմի հետ:

Դիմողը նաև հայտնել է, որ փաստաբան Լենա Կարապետյանցը գործի քննության ընթացքում չի տեղեկացրել Դիմողին դատական նիստերի և գործի ընթացքի վերաբերյալ:

Դիմողը խնդրել է փաստաբան Լենա Կարապետյանցին պատասխանատվության ենթարկել, պարտավորեցնել իր վրա կրելու դատարանի կայացրած վճռի պատասխանատվությունը, ինչպես նաև չեղյալ համարելու իր կողմից փաստաբանին տրված լիազորագիրը և կնքված պայմանագիրը:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահը 2014 թվականի հուլիսի 02-ի թիվ 224-Ա/ԿԳ-14071 որոշմամբ Փաստաբան Լենա Կարապետյանցի (արտոնագիր թիվ 910) նկատմամբ հարուցել է կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 3.6.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով (փաստաբանի կողմից դիմող Ռուզան Ադանալյանին դատական նիստերի և գործի ընթացքի մասին տեղեկություններ չտրամադրելու վարքագիծը ստուգելու համար:

07.07.2014 թվականին փաստաբան Լենա Կարապետյանցի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի նախապատրաստումը հանձնարարվել է կարգապահական գործ նախապատրաստող անձ Սամվել Միրզոյանին՝ Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի համաձայն եզրակացություն կազմելու համար:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Քաղաքացի Ռուզան Ադանալյանը, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (այսուհետ՝ Պալատ), հայտնել է, որ 20.08.2013թ. դիմել է «Շահբազյան և գործընկերներ» փաստաբանական ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում քննվող գումարի բռնագանձման գործով Դիմողի՝ որպես պատասխանողի շահերը ներկայացնելու նպատակով: 2013 թվականի սեպտեմբերին Դիմողի և Ընկերության միջև կնքվել է պայմանագիր, որի շրջանակներում Դիմողը վճարել է 200.000 ՀՀ դրամ գումար:

Ընկերությունից Դիմողի շահերը ներկայացրել է փաստաբան Լենա Կարապետյանցը: Դիմողի հիմնական նպատակը նշված քաղաքացիական գործի շրջանակներում իր գործով հայցվոր Լուսինե Գինոսյանի մոտ գրավ դրված երեսունմեկ կտոր ոսկյա զարդերը հետ ստանալն է, սակայն Ընկերությունը չի խոստացել, որ Դիմողը զարդերը հետ կվերադարձնի:

Դիմողի շահերի պաշտպանության նպատակով փաստաբան Լենա Կարապետյանցը ներկայացրել է հակընդդեմ հայցադիմում:

Դիմողը նշում է, որ իրեն դուր չի եկել փաստաբան Լենա Կարապետյանցի կողմից կազմված հակընդդեմ հայցադիմումը: Դիմողի կողմից ներկայացվել է հայցադիմումի իր կողմից գրված տարբերակը, որն ըստ Դիմողի՝ պետք է ներկայացվեր դատարան:

Դիմողը ներկայացրել է գործի քննությունը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունների պատճեններ, որոնք դատարան են մուտք եղել փաստաբան Լենա Կարապետյանցի անունից:

Դիմողը գտնում է, որ փաստաբան Լենա Կարապետյանցի կողմից նշված միջնորդությունները ներկայացվել են գործի քննությունը ձգձգելու և գումար աշխատելու նպատակով, քանի որ վերջինս համագործակցում է հակառակորդ կողմի հետ:

Դիմողը նշել է, որ փաստաբան Լենա Կարապետյանցը չի տեղեկացրել իրեն գործի ընթացքի վերաբերյալ, ինչպես նաև չի հայտնել գործով նշանակված դատական նիստերի մասին: Դիմողի տեղեկացմամբ՝ դատարանը դատական նիստերի ծանուցագրերն ուղարկել է փաստաբանի՝ Երևան քաղաքի Ալեք Մանուկյան 17, բն. 1 հասցեով, իսկ փաստաբանը, ստանալով ծանուցագրերը, Դիմողին նշանակված դատական նիստերի մասին չի իրազեկել: Դիմողն իր գործով դատական նիստերի մասին իմացել է դատարանից, երբ հարցում է արել գործի ընթացքի մասին տեղեկություններ ստանալու նպատակով:

Դիմողը խնդրել է փաստաբան Լենա Կարապետյանցին պատասխանատվության ենթարկել, պարտավորեցնել իր վրա կրելու դատարանի կայացրած վճռի պատասխանատվությունը, ինչպես նաև չեղյալ համարելու իր կողմից փաստաբանին տրված լիազորագիրը և կնքված պայմանագիրը:

Դիմողը Խորհրդին տվել է նույնաբովանդակ բանավոր բացատրություն:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը.</u>

01.08.2014 թվականին Պատասխանողը տվել է գրավոր բացատրություն հետևյալ բովանդակությամբ. «Ռուզան Ադանալյանը իր դիմում-բողոքում հայտնել է այն դիրքորոշումը, որ ես չեմ հայտնել գործով նշանակված դատական նիստերի մասին, քանի որ հայցադիմումի մեջ նշել եմ գրասենյակի հասցեն, չեմ տեղեկացրել իրեն գործի ընթացքի վերաբերյալ: Վերոգրյալը չի համապատասխանում իրականությանը, հիմք ընդունելով հետևյալ հանգամանքները.

Ռուզան Ադանալյանը մեր գրասենյակ դիմելու ժամանակ հայտնել է, որ բնակվում է պարբերաբար Գյումրիում Երևանում, ու խնդրել է, որ մեր գրասենյակը ստանա դատարանի կողմից ուղարկված դատական ծանուցումները, որոշումները, այլ փաստաթղթերը: Մինչ հակընդդեմ հայցադիմումը դատարան

մուտք անելը Ռուզան Ադանալյանին այն տրամադրվել է, որի ներածական մասում նշված է եղել որպես ծանուցման հասցե մեր գրասենյակի հասցեն՝ քաղաք Երևան, Ալեք Մանուկյան 17, բն 1: Ռուզան Ադանալյանը հակընդդեմ հայցադիմումն ուսումնասիրել է մի քանի օր, խնդրել դրա պատճենը, որից հետո միայն այն ստորագրել: Եթե վերջինս համաձայն չլիներ ծանուցման հասցեի հետ, ապա չէր ստորագրի հակընդդեմ հայցադիմումը և կպահանջեր որպեսզի նշվեր որպես ծանուցման հասցե իր հասցեն: Յուրաքանչյուր դատական նիստից հետո Ռուզան Ադանալյանին ես զանգահարել հայտնել եմ դատական նիստի ընթացքի վերաբերյալ, բացի այդ վերջինս պարբերաբար մոտեցել է մեր գրասենյակ հեռոխոսային կապով ստացած տեղեկատվությունից առաջացած հարցերը հետագա ընթացքը պարզաբանելու համար:

01.08.2014թվականին Պատասխանողը տվել է գրավոր բացատրություն հետևյալ բովանդակությամբ «04.09.2013 թվականին Ռուզան Ադանալյանը դիմել է «Շահբազյան և գործընկերներ» ՍՊԸ-ին նրանց միջև կնքվել է թիվ 26 իրավաբանական ծառայության մատուցման պայմանագիր: 04.09.2013 թվականից սկսած մինչ վճռի հրապարակումը՝ 20.05.2014 թվականը, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը թիվ ՇԴ/0130/02/13 քաղաքացիական գործով ինը դատական նիստ է իրականացրել, որոնց վերաբերյալ Ռուզան Ադանալյանը ծանուցվել էր վեց անգամ՝ 24.09.2013թ., 26.09.2013թ., 07.11.2013թ., 16.11.2013թ., 12.02.2014թ., 30.03.2014թ., 26.07.2013թ.:

26.07.2013 թվականի քաղաքացիական գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշման համաձայն՝ Ռուզան Ադանալյանը բնակվում է Այգեստան 3-րդ փող, թիվ 7 Ա տան հասցեով (հիմք Երևանի քաղաքապետարանի «Կենտրոն» վարչական շրջանի տեղամասի տեղեկանքը): Ռուզան Ադանալյանի կողմից ներկայացված 25.06.2014 թվականի վերաքննիչ բողոքում ծանուցման հասցե նույնպես նշված է Այգեստան 3-րդ փող, թիվ 7 Ա տուն: Այսպիսով, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջաների ընդհանուր իրավասության դատարանը Ռուզան Ադանալյանին ծանուցել է վեց դատական նիստերի վերաբերյալ իր կողմից նշված Այգեստան 3-րդ փող, թիվ 7 Ա տան հասցեով: Փաստորեն, Ռուզան Ադանալյանը չէր կարող տեղյակ չլիներ դատական նիստերի մասին: Միաժամանակ, ներկայացնում եմ անձնական հեռախոսահամարիցս կատարված վերծանումները, որոնցից երևում է, որ ես պարբերաբար Ռուզան Ադանալյանի հետ եղել եմ հեռախոսային կապի մեջ: Ռուզան Ադանալյանը հաճախ մոտեցել է մեր գրասենյակ իր մոտ առաջացած հարցերը, գործի հետագա ընթացքը պարզաբանելու համար անհրաժեշտության պարագայում կարող ենք հրավիրել «Շահբազյան և գործընկերներ» ՍՊԸ-ի աշխատակիցներին որպես վկաներ, որոնք կհայտնեն, թե ինչ հաճախականությամբ են տեսել Ռուզան Ադանալյանին մեր գրասենյակում: Ռուզան Ադանալյանը բոլոր դատական նիստերի վերաբերյալ տեղյակ է եղել միայն իր պահանջով է դատական նիստերը հետաձգվել, հակառակ դեպքում վերջինս դեռ 2013 թվականի վերջերին կդիմեր «Շահբազյան և գործընկերներ» ՍՊԸ-ին իրավաբանական ծառայության մատուցման պայմանագիրը դադարեցնելու կամ այդ ժամանակ կներկայացներ բողոք ՀՀ Փաստաբանների պալատին: Դատական նիստերը հետաձգվել են, քանի որ Ռուզան Ադանալյանը

չէր կողմնորոշվում, թե Լուսինե Գինոսյանի հետ հանդիպումը որտեղ կազմակերպեր, թե որ փորձագետին դիմեր զարդերը գնահատելու համար, իսկ մեր կողմից առաջարկված տարբերակներին չէր համաձայնում: Հակընդդեմ հայցի առարկան հակընդդեմ հայցի իրավական, փաստական հանգամանքները իմ կողմից բացատրվել է Ռուզան Ադանալյանին, վերջինս համաձայնել է և մի քանի օր հակընդդեմ հայցադիմումն իր մոտ պահելուց հետո ստորարագրած ներկայացրել ինձ՝ Դատարան ներկայացնելու համար: Համաձայն չլինելու պայմաններում կհրաժարվեր մեր կողմից մատուցված իրավաբանական ծառայությանից, չէր ստորագրի հակընդդեմ հայցադիմումը: Ռուզան Ադանալյանի կողմից հայտնած այն դիրքորոշումը, որ 27.03.2014 թվականին դատական նիստի ժամանակ ես հայտարարել եմ, որ կողմերը բանակցությունների փուլում են և Դատարանը մտել է դատաքնության փուլ իրականությանը չի համապատասխանում: 27.03.2014 թվականին դատական նիստի ժամանակ Լուսինե Գինոսյանի փաստաբանը հայտնել է, որ դեռ կողմերը հաշտության համաձայնության ձեռք բերման փուլում են գտնվում, որին ես առարկել եմ: Դատարանը դատաքնության փուլ չի մտել հաջորդ դատական նիստի ժամանակ՝ 16.04.2014 թվականին, իմ կոլեգա Հակոբ Սաֆարյանը ներկայացրել է մի շարք միջնորդություններ՝ վկաներ ներգրավելու, ապացույցներ պահանջելու և այլն (հիմք ձայնագրման կրիչը): Իմ կողմից Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ներկայացրած բոլոր փաստաթղթերի պատճենները մեկ օրինակով տրամադրվել է Ռուզան Ադանալյանին, վերջինս ՀՀ Փաստաբանական պալատ ներկայացրած բողոքին կցել է դրանցից մի քանիսը՝ վկանների հարցաքննման վերաբերյալ փաստաթղթի պատճենը, հակընդդեմ հայցադիմումը»: Պատասխանողը կից ներկայացրել 04.09.2013թ. թիվ 26 իրավաբանական ծառայության մատուցման պայմանագրի պատճենը, Դատալեքսից թիվ ՇԴ/0130/02/13 քաղաքացիական գործի ընթացքի վերաբերյալ փաստաթղթի պատճենը, 26.06.2013թ. որոշման, 25.06.2014թ. վերաքննիչ բողոքի պատճենները, թվով 12 հետադարձ ծանուցման պատճենները, Թիվ ՇԴ/0130/02/13 քաղաքացիական գործի ձայնագրման կրիչը:

Պատասխանողը Խորհրդին տվել է նույնաբովանդակ բանավոր բացատրություն:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

2014 թվականի սեպտեմբերի 08-ին Սամվել Միրզոյանի կողմից կազմվել է եզրակացություն և 08. 09. 2015թվականին կարգապահական գործը հանձնվել ՀՀ Փաստաբանների պալատ:

2014 թվականի սեպտեմբերի 10-ին թիվ 14-071 կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդի անդամ Մելանյա Առուստամյանին (նիստը նախագահող):

Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

18.09.2014թվականին գործն ընդունվել է վարույթ և նիստի օր է նշանակվել 31.10.2014թ-ին ժամը 19:30-ին ք. Երևան Զաքիյան փողոց 2 հասցեում: 31.10.

2014թ-ին նիստը հետաձգվել է Դիմողի միջնորդությամբ: Նիստի օր է նշանակվել 2014թվականի դեկտեմբերի 11-ին ժամը 19:00-ին ք. Երևան Զաքիյան փողոց 2 հասցեում: 2014 թվականի դեկտեմբերի 11-ին նիստը հետաձգվել է Դիմողի միջնորդությամբ: Նիստի օր է նշանակվել 2015 թվականի դեկտեմբերի փետրվարի 02 -ին ժամը 19:15-ին Ք. Երևան Զաքիյան փողոց 2 հասցեում: 2015 թվականի փետրվարի 02-ին նիստը հետաձգվել է և նիստի օր է նշանակվել 2015թվականի փետրվարի 24-ին ժամը ք. Երևան Զաքիյան փողոց 2 հասցեում:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

Դիմողի կողմից պատասխանողին տրվել է լիազորագիր, այդ թվում հաշտություն կնքելու լիազորությամբ: 21.08.2013թ. Լենա Կարապետյանցը ներկայացել է դատարան Ռ.Ադանալյանի լիազորագրով և միջնորդել է հետաձգել դատական նիստը գործի նյութերին ծանոթանալու համար:**(նշված փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ և լիազորագրով):**

04.09.2013 թվականին Ռուզան Ադանալյանը դիմել է «Շահբազյան և գործընկերներ» ՍՊԸ-ին նրանց միջև կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագի: (***նշված փաստը հաստատվում է գործում առկա է 04. 09.2013թ. Ռուզան Ադանալյանի և «Շահբազյան և գործընկերներ» ՍՊԸ-ի միջև կնքված իրավաբանական ծառայություններ մատուցելու Թիվ 26 պայմանագրով)***

Ռուզան Ադանալյանը, որպես «Պատվիրատու» պայմանագիր է կնքել Լենա Կարապետյանցի հետ որպես «Շահբազյան և գործընկերներ» ՍՊԸ-ի տնօրեն: Պայմանագրով «Կատարողը» ընկերությունն է: Պայմանագրով ներկայացված է, որ «Կատարող»-ը իր պարտավորությունները կատարելու է իր աշխատակիցների Ազատ Շահբազյանի և Լենա Կարապետյանցի միջոցով: Պայմանագրի 2.1.5 կետով սահմանվել է, որ կատարողները կարող են դատական նիստերին մասնակցել ինչպես անձամբ այնպես էլ իր կողմից ներգրավված իրավաբանի միջոցով……:Պայմանագրի 2.1.6 կետով սահմանվել է, որ Կատարողը պատվիրատուին տեղյակ է պահում դատական նիստերի ընթացքի մասին: Պայմանագրի 2.2.2 կետով սահմանվել է, որ պատվիրատուն առանց կատարողի համաձայնության դատարան չպետք է տրամադրի որևէ փաստաթուղթ կամ տեղեկություն: 3.1 կետի ա/,բ/,գ/ ենթակետերով սահմանվել է պայմանագրով նախատեսված վճարման կարգն ու գումարի չափը: Պայմանագիրը նաև

նախատեսել է իրավաբանական ծառայությունների մատուցման ժամանակ երաշխիքների բացակայության հանգամանքը որոնք նախատեսվել են 4.2 և 4.3 կետերով:

Պատասխանողի կողմից հեռախոսով հաշտության առաջարկ է արվել փաստաբան Թամարա Յայլոյանին, որին ներկա է եղել նաև Դիմողը: **(նշված փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ):**

Դիմողի շահերի պաշտպանության նպատակով Պատախանողը կազմել է հակընդդեմ հայցադիմում, որը ստորագրվել է Դիմողի կողմից և 18. 10. 2013թ ներկայացվել դատարան:(***Նշված փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ և դատալեքս տեղեկատվական համակարգից հանված քաղվածքով):***

Պատասխանողի կողմից հարցման են ենթարկվել վկաներ, որին ներկա է եղել նաև Դիմողը: ***(նշված փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ):***

04.09.2013 թվականից սկսած մինչ վճռի հրապարակումը՝ 20.05.2014 թվականը, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը թիվ ՇԴ/0130/02/13 քաղաքացիական գործով 10 դատական նիստ է իրականացրել՝ որից 7 նիստերը կայացել են մինչև 2014 թվականի մարտի 27-ը: Տվյալ քաղաքացիական գործով կայացած դատական նիստեր են տեղի ունեցել 17. 09. 2013թ., 15. 10. 2013թ., 11. 11. 2013թ., 02. 12. 2013թ., 20. 12. 2013թ., 12.03.2014թ., 27.03.2014թ., 16.04.2014թ., 07.05.2014թ. և վճռի հրապարակման օրը 20.05.2014թ: (***Նշված փաստը հաստատված է գործում առկա դատական Դատալեքս տեղեկատվական համակարգից հանված քաղվածքով ևդատական նիստի կրիչով):***

Գործում առկա են ծանուցագրեր, համաձայն որի Ռուզան Ադանալյանը կայացած նիստերից ծանուցվել է 5 նիստերի կայացման տեղի, ժամանակի, վայրի մասին և այդ դատական ծանուցագրերն ուղարկվել են անձամբ Ռ.Ադանալյանին նրա հասցեով Երևան քաղաքի Այգեստան 3-րդ փողոցի 7 տուն հասցեով, որի մասին հայտնել էր ինքը Ռուզան Ադանալյանը: Ռուզան Ադանալյանը ծանուցվել էր հինգ անգամ՝

04.09.2013 թվականին՝ 17. 09. 2013 թվականի նիստի մասին
26.09.2013 թվականին՝ 15. 10. 2013թվականի նիստի մասին
07.11.2013թվականին՝ 11. 11. 2013թվականի նիստի մասին
16.11.2013 թվականին՝ 02. 12. 2013թ վականի նիստի մասին
12.02.2014թվականին՝ 12.03.2014թվականի նիստի մասին.,

(Նշված փաստը հաստատված է գործում առկա դատական ծանուցագրերի ետ ստացման անդորագրերով, ինչպես նաև կողմերի բացատրություններով):

12.03.2014թ. դատական նիստի մասին Դիմողը տեղեկացել է նաև ատասխանողից՝ հեռախոսազանգով 14.01.2014թ: (**Նշված փաստը հաստատվում է Պատասխանողի կողմից ներկայացված հեռախոսահամարի վերծանում-ներով):**

20. 12. 2013թ. դատական նիստի մասին Դիմողը տեղեկացել է 04. 12. 2013 թվականին գործի նյութերին ծանոթանալու վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո: (Նշված փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ):

27.03.2014թ. դատական նիստի *մասին Դիմողը տեղեկացել է Պատասխանողից՝ հեռախոսազանգով 18.03.2014թ.:(**Նշված փաստը հաստատվում է Պատասխանողի կողմից ներկայացված հեռախոսահամարի վերծանումներով** և կողմերի բացատրությամբ):*

2013թ. հրավիրված բոլոր դատական նիստերը կայացել են ու հետաձգվել կողմերի ոչ պատշաճ ծանուցումների կամ կողմերի դատարան չներկայանալու պատճառներով:

2014 թվականի մարտին Պատասխանողը Դիմողին հրավիրել է «Շահբազյան և գործընկերներ» ՍՊԸ-ի գրասենյակ և հայտնել, որ ինքը մեկնում է ծննդաբերության արձակուրդ: 26. 03. 2014թվականին Դիմողը լիազորագիր է տվել «Շահբազյան և գործընկերներ» ՍՊԸ-ի աշխատակից Հակոբ Սաֆարյանին (նշված փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ):

Պատասխանողը տվյալ գործով մասնակցել է 04. 09. 2013 թվականից մինչև 2014 թվականի մարտի 27-ը: Այսինքն՝ պետք է մասնակցեր 7 դատական նիստի, որից 5-ի վերաբերյալ ծանուցվել է Դիմողը:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Համաձայն գործում առկա ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավար՝ Լևոն Տեր-Ավետիքյանցի կողմից տրված տեղեկանքի փաստաբան Լենա Կարապետյանցը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 2009 թվականի հոկտեմբերի 24-ին և նրա նկատմամբ՝ 2009-2014թթ ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել, չհաշված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 02.07.2014թվականին թիվ 224-ԱԿԿԳ14071 որոշմամբ հարուցված կարգապահական վարույթի:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Պալատի խորհուրդը գտնում է, որ հարուցված վարույթը պետք է կարճել հետևյալ հիմնավորումներով.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև Կանոնագիրք) 3.6.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Դիմողը նշում է, որ փաստաբան Լենա Կարապետյանցը չի տեղեկացրել իրեն գործի ընթացքի վերաբերյալ, ինչպես նաև չի հայտնել գործով նշանակված դատական նիստերի մասին: Դիմողի տեղեկացմամբ՝ դատարանը դատական նիստերի ծանուցագրերն ուղարկել է փաստաբանի՝ Երևան քաղաքի Ալեք Մանուկյան 17, բն. 1 հասցեով, իսկ փաստաբանը, ստանալով ծանուցագրերը, Դիմողին նշանակված դատական նիստերի մասին չի իրազեկել: Դիմողը իր գործով դատական նիստերի մասին իմացել է դատարանից, երբ հարցում է արել գործի ընթացքի մասին տեղեկություններ ստանալու նպատակով:

Խորհուրդը գտնում է, որ Դիմողը տեղյակ է եղել գործի ընթացքի մասին հետևյալ հիմնավորումներով.

Պատասխանողի կողմից հեռախոսով հաշտության առաջարկ է արվել հայցվոր կողմի փաստաբան Թամարա Յայլոյանին, որին ներկա է եղել նաև

Դիմողը: Դիմողի շահերի պաշտպանության նպատակով Պատասխանողը կազմել է հակընդդեմ հայցադիմում, որը ստորագրվել է Դիմողի կողմից և ներկայացվել դատարան: Պատասխանողի կողմից հարցման են ենթարկվել վկաներ, որին ներկա է եղել նաև Դիմողը: Սույն կարգապահական վարույթի քննության ընթացքում հաստատվել է, որ Պատասխանողը 04. 09. 2013 թվականից մինչև 2014 թվականի մարտի 27-ը տվյալ գործով պետք է մասնակցեր 7 դատական նիստի, որից 5-ի վերաբերյալ ծանուցվել է Դիմողը: Այսինքն, Դիմողը տեղյակ է եղել 5 դատական նիստերի ժամանակի և տեղի մասին՝ 17. 09. 2013թ., 15. 10. 2013թ., 11. 11. 2013թ., 02. 12. 2013թ., 12.03.2014թ., իրեն իսկ ուղարկված ծանուցագրերով, 12.03.2014թ. դատական նիստի մասին Դիմողը տեղեկացել է նաև Պատասխանողից՝ հեռախոսազանգով 14.01.2014թ, 20. 12. 2013թ. դատական նիստի մասին Դիմողը տեղեկացել է 04. 12. 2013թ. գործի նյութերին ծանոթանալու վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո, իսկ 27.03.2014թ. դատական նիստի մասին տեղեկացել է Պատասխանողից՝ հեռախոսազանգով 18.03.2014թ. :

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. *ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 2014 թվականի հուլիսի 02-ի, թիվ 224-Ա/ԿԳ-14071 որոշմամբ փաստաբան Լենա Կարապետյանցի (արտոնագիր թիվ 910) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ կարգապահական խախտման դեպքի բացակայության հիմքով:*

2. *Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Լենա Կարապետյանցին և քաղաքացի Ռուզան Ադանալյանին:*

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյան